



LIGA INSURANCE

Member of **GRAWE GROUP**



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գույքի ապահովագրությունը հիմնակի միջոց է պաշտպանելու Ձեր անշարժ գույքը և կանխելու խոշոր ֆինանսական կորուստները հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.ligainsurance.am



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Հրդեհ,
- Պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս,
- Տրանսպորտային միջոցների վրա երթ և/կամ կենդանու հետ բախում, գույքի վրա ծառերի վայր ընկնելը, թռչող սարքերի, դրանց մասերի կամ բեռի վայր ընկնելը,
- Տարերային աղետներ (բացառությամբ երկրաշարժի), այդ թվում՝ ուժգին քամի, տալֆուն, փոթորիկ, մրրիկ, ջրհեղեղ, հեղեղում, կարկուտ, տվյալ տեղանքին ոչ հատուկ մթնոլորտային տեղումներ, ապահովագրության օբյեկտի կայծակահարում, որը չի հանգեցրել հրդեհի առաջացմանը, սողանք, փլվածք, սելավ, ձնահյուս,
- Սեփականության նկատմամբ հանցագործություններ՝ կոտորանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում (վնասում):



ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված «Շինությունների, բնակարանների, տնային և այլ գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմաններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը և 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված «Ձեռնարկությունների գույքի և գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասներից ապահովագրության պայմաններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության գրասենյակ:



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:



ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի համար՝ ապահովագրական գումարի 1%, բայց ոչ պակաս, քան 90,000 ՀՀ դրամը:



ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՈԻՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ է զանգահարել (+374 12) 88 88 88 հեռախոսահամարով,
- Պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմին (գողության, կոտորանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն լրացնել առցանց եղանակով՝ www.ligainsurance.am
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Չեն կատարվել ապահովագրության պայմանագրով/պայմաններով նախատեսված պարտականությունները,
- Գույքի սեփականատիրոջ/լիազորված օգտագործողի կողմից խախտվել են ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Ապահովագրական պատահարը հանդիսացել է գույքի սեփականատիրոջ/լիազորված օգտագործողի կամ նրա ընտանիքի անդամի միտումնավոր գործողությունների հետևանք, կամ վնասը պատճառվել է դիտավորյալ հանցագործության արդյունքում,
- Քայքայում, աղտոտվածության կամ կոռուպիայի ազդեցություն, ապահովագրության օբյեկտների ֆիզիկական մաշվածություն,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,
- Ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ, քաղաքացիական պատերազմ, ցանկացած տիպի ժողովրդական հուլումներ, գործադուլներ, ահաբեկչական գործողություններ,
- «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված «Շինությունների, բնակարանների, տնային և այլ գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմաններ»-ով և 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված «Ձեռնարկությունների գույքի և գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասներից ապահովագրության պայմաններ»-ով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- Շարժական գույքին (կահույք, տեխնիկա և այլն) պատճառված վնասները չեն հատուցվում,
- Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: